նրա տոկունութեան գաղտնիքը նախ եւ առաջ այն էր, որ ժողովրդը նրան վստահում ու հաւատարիմ էր, ժողովրդը բնագրով ամօնան ծիշտ էր ընկալում Կարէն Դեմիրճեանին: Եւ դա այն մեծ ուժն էր, յենարանը, որ տրուած էր նրան բոլոր դժւարութիւններին դիմագրութելու: Ես համոզաւած եմ, որ մեր ժողովրդը նոյնքան նաքուր ու զուլաւ կը պահի Կարէնի անունը եւ այդպէս կը հաղորդի իր զաւակներին ու նրանց յաջորդներին: Այդպէս կը մնայ Կարէնի անունը, իսկ պատմութիւնը մի զարմանալի յատկութիւն ունի՝ դա ժամանակի ընթացքում ինքնամաքրման հմարաւորութիւնն է, որ թոյլ է տալիս թացը չորին չխառնել: Կարէնի դեպքում այդ ժամանակը պէտք չէ. նրան սիրում էին կենանութեան օրօք, որը շատ հազարէք է լինում պետական պաշտօնայի եւ քաղաքական գործիչ կեանքում, սիրում են յետմահու: Եւ շնորհակալութիւնն էր ժողովրդին, որ յենարան եղաւ իր զաւակին: ■



Թամար Դալեչեան  
«Կայաստանի Համբավետութիւն» օրաթերթ  
24.10.00

### Բոլորիս Փորձութիւնը

«Հայագիտակ» հրատարակչութեան լոյս ընծայած գիրքը կոչում է «Ոգու փորձութիւն» եւ 478 էջում համեստորէն ու մանրամասնօրէն փորձում է կերտել գրող, գինուր ու զորավար, վարչապետ, մարդ ու քաղաքացի Վազգէն Սարգսեանի կերպարը: Գիրքը ճեռնարկել ու խմբագրել է ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ՝ Գագիկ Յարութիւննեանը, թէեւ ինչպէս գրել է նախարանում. «Այս գիրքը մենք չեն, որ հեղինակել ենք: Այն լուսելին մը կեանքի, նիրառմով կատարած շիտակ ու մնայում գործերի պատում է սերունդներին Վազգէն Սարգսեանի դասերը փոխանցելու ակնկալիքով»:

2000 էջից աւելի նիւթից, ցաօք Ազգային ժողովի դրամական նիստերում Վազգէն Սարգսեանի շատ ելլյուներ, դեռ հրապարակման ենթակայ չեն: Նաեւ դեռ ամրութականացնելու են արխիւնները, որ յետոյ հնարաւոր կը լինի հրապարակել: ■

Ը.Ծ օրաթերթ  
24.10.00

## Հասարակական

# Փ<sup>3</sup> Օ<sup>3</sup> Ա<sup>3</sup> օՇԱՅՈՒՄ ԱՅ<sup>1</sup> աՅ» Ե ԱՅ±ԱՅ<sup>1</sup> աՅ» Ե

Դայաստանի Դանրապետութեան Սահմանադրութիւնը մշակելու գործնաբառում երկարաքացիութեան հարցը աշխոյժ վէճեր էր առաջացրել: Իսկ ներկայումս, սահմանադրութեան փոփոխութիւններ նախապատճեն կազմութեամբ, նոր իրատապութիւն է ստացել:

Այս եւ իհմանամուրին առնչող միւս հարցերին պատասխանելու համար մեր թղթակիցը դիմեց ԵՊՀ քաղաքացիակամ իրաւունքի ամրիոնի վարիչ, պրոֆեսոր Ռաֆիկ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ:



- Երկարաքացիութիւնը իրաւակա՞ն, թէ՞ քաղաքական հակացութիւն:

- Նախ պէտք է տալ քաղաքացիութեան բնորոշումը: Ժամանակակից իրաւագիտութեան մէջ այս բնորոշում է որպէս Ֆիզիկական անձի քաղաքական եւ իրաւական պատկանելութիւն որեւէ պետութեան: Քաղաքացիութիւնը դրսեւուրում է որպէս պետութեան եւ իշխանութեան (հաստակութեան) տակ գտնող անձի փոխյարարերութիւն: Պետութիւնը երաշխաւորում է պահովել իր քաղաքացու իրաւունքներն ու շահերը, նրան պաշտպանել եւ հովանաւորել նաև արտասահմանում: Քաղաքացին իր հերքին պարտաւոր է անվերապահօրեն պահպանել պետութեան օրենքները, կատարել նրա պատիրաններն ու սահմանաւած պարտականութիւնները: Այդ իրաւունքների եւ պարտականութիւնների համակցութիւնն էլ քաղաքացու համար ստեղծում է որոշակի քաղաքական-իրաւական կարգավիճակի, որով նա իր երկրում տարբերում է օտարերկրեայ քաղաքացիներից եւ թէկուզ իր երկրում ապրող, բայց քաղաքացիութիւն չունեցող անձանցից: Այստեղից էլ հետեւութիւն. քաղաքացիութիւնը եւ իրաւական, եւ քաղաքական կատեգորիա է:

Ասածից բխում է, որ երկարաքացիութիւնը նաև անձի քաղաքական-իրաւական պատկանելութիւնն է երկու ինքնիշխան պետութիւնների, որոնցից իրաքանչիրը տեսալ անձին ճանաչում է որպէս իր քաղաքացի:

- Իսկ որո՞նք են երկարաքացիութիւն ստանալու կամ այդպիսին դառնալու բուն պատճառները:

- Դրանց մասին ճիշտ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է իմանալ, թէ քաղաքացիութեան ձեռքբերման ի՞նչ եղանակներ են սահմանաւած:

Հիմնական եղանակները երկուս են: Առաջինի հիմքը ծագում է ծննդեան ուժով, կիրառելով երկու չափանիշ՝ արեան եւ հողի: Առաջինի դէպրում տեսալ պետութեան քաղաքացիներից ծնաւած անձանց այդ պետութեան քաղաքացիութիւն տրում է անկախ այն բանից, թէ նրանք որտեղ են ծնել: Երկրորդ դէպրում, անկախ ծնողներից քաղաքացիութիւնց, քաղաքացիութիւն տրում է տեսալ պետութեան տարածքում ծնաւած անձանց: Յաճախ այս սկզբունքները համակցում են. ԱՄՆ-ի Անգլիայի օրենս-

դրութեամբ նրանց քաղաքացիներից ծնաւած երեխաները, անկախ վայրից, ինչպէս նաև օտարերկրացիներից ծնաւած համարում էն այդ երկների քաղաքացիներ: Արեան սկզբունքը կիրառելով, բուրքերից ծնաւած երեխաները, անկախ ծննդեան վայրից, Թուրքիայի քաղաքացիներից: Այդպէս է սահմանաւած նաև ՀՀ քաղաքացիութեան մասին օրենքի 11 յօդածով, ըստ որի՝ «Երեխան, ում ծնունդները նրա ծննելու պահին ՀՀ քաղաքացիներ են, անկախ ծննելու վայրից, ծնունդը ՀՀ քաղաքացիութիւն»: Մինչդեռ, օրինակ, Արգենտինայի օրենսդրութեամբ հակառակն է. այդտեղ ծնաւած երեխաները, անկախ նրանց ծնողների քաղաքացիութիւնից, արգենտինացին են: Հետեւարար, եթէ ՀՀ քաղաքացիներից Արգենտինայում երեխայ ծնի, կը դառնայ երկարաքացի:

Երկարաքացիութիւն կարող է ծագել օտարերկրացու հետ ամուսնութեան դէպրում, երբ տեսալ պետութիւնը ամուսնացող իր քաղաքացու քաղաքացիութիւնը չի դադարեցնել, իսկ ամուսնութերից միւսի պետութիւնը նրան տալիս է իր քաղաքացիութիւնը: ՀՀ օրենսդրութիւնն աշխատել է խուսափել ննան բարդոյթից եւ սահմանել է հողի ու արեան սկզբունքների իրովի համակցութիւն. այն դէպրում, երբ ծնողներից մէկը երեխայի ծննելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ միայն՝ օտարերկրեայ քաղաքացի, երեխայի քաղաքացիութիւնը որոշում է ծնողների գրաւոր համաձայնութեամբ: Կազմադրուած են նաև համաձայնութեան դէպրերը:

Մեզ համար գործնական մեծ նշանակութիւն ունի մի այսպիսի երեւոյք, գործնականում երկարաքացիութիւն առաջանաւմ է նաև օրինախախտման արդինքում, սուրյեկտի պատճառով: Յայտնի է, օրինակ, որ այլ երկրներ, յատկապէս Ռուսաստանի Դաշնութիւն են մեկնել մէկ միլիոնից աւելի ՀՀ քաղաքացիներ, որոնց զգալի մասը, չբարձրեցնելով իրենց ՀՀ քաղաքացիութիւնը, ընդունում են ՌԴ քաղաքացիութիւն, որովհետեւ ՌԴ-ն երկարաքացիութիւն բոյլ է տալիս: Խեր կարծիքով, որպէսզի յիշեալ անձինք սոցիալական վիճակի բարեւատման յետոյ անխոչընդունութիւն վերադառնան հայրենիք, անհրաժեշտ է բոյատել երկարաքացիութիւն, իհարկէ, որոշակի պայմաններով:

- Յաճախ են խօսում ըստ ազգային յատկանշի երկարաքացիութիւն շնորհելու մասին...

- Հայաստանն, օրինակ, իրաւամբ սահմանել է, որ ՀՀ քաղաքացիութիւն չունեցող տասնուր տարին լրացրած իրաքանչիր անձ կարող է քաղաքացիութիւն ստանալու համար դիմել միայն այն դէպրում, եթէ նա, օրենքով սահմանաւ կարգով, վերջին 3 տարիներին մշտապէս բնակել է ՀՀ-ում, կարող է բացատրել հայերենով եւ ծանօթ է ՀՀ Սահմանադրութեանը: Առանց այդ երեք տարաւայ բնակութեան ժամկետը պահպանելու, ՀՀ քաղաքացիութիւն կարող է ստանալ այն անձը, ով 1. ամուսնացի է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխայ, հայր կամ մայր, 2. որը ծագումով հայ է եւ բնակութիւն է հաստատել ՀՀ-ում:

Հասկանալի է, որ «բնակութիւն է հաստատել Հայաստանի Հանրապետութիւնում» արտայայտութիւնը բոյլ չի տալիս արտերկրի հայերին իրենց ցանկութեամբ անմիջապէս ՀՀ քաղաքացիութիւն ծնունդունք բերել: Հենց այս հարցը

## Հասարակական

է, որ բուն վեճերի առիթ տես ՀՀ Սահմանադրութեան մշակման ժամանակ, վեճեր, որոնք ծագել են նաև այսօր, կապած սահմանադրական փոփոխութիւնների պահանջի հետ: Սահմանադրական փոփոխութիւններ նախապատրաստող յանձնաժողովն այսօր գրեթե միաձայն, իհարկէ՝ առաջմ տեսականօրէն, վերացրել է այդ արգելանքը, բայց եւ Սահմանադրութեան մէջ երկարացացիութիւն բոյլատրուղ նորմ մտցնելու որոշում չի կայացրել: Մեր խորին համոզմամբ ազգութեամբ հայերին երկարացացիութիւն ունենալու իրաւունքի վերապահումը ուղղակի անհրաժեշտութիւն է: Այն չի հակասում միջազգային իրաւական որեւէ նորմի: Ինչո՞ւ պէտք է մենք ճակատագրի բերումով աշխարհով մէկ սփուած մեր եղբայրներին ու քոյլերին զրկենք հայրենիքի հետ կապելու եւ նրա հանդէ որոշակի պարտաւորութիւններ կատարելու հնարաւորութիւնից:

### - Միջազգային իրաւունքը խոչընդոտ չի նախատեսում:

- Երկարացացիութիւնն ընդհանրապէս անկանոն վիճակի արտայատութիւնն է եւ մեզ թելարդում է մեր ազգի պատմական ճակատագրով: Տեսականօրէն հնարաւոր է նոյնիսկ, որ պատերազմական պայմաններում այլ երկրների հայ քաղաքացիները ստիպած լինեն կունի իրենց հայրենիքի դժմ: Բայց պատմութիւնից մեզ յայտնի են դրա հետևանքները:

Միջազգային փորձութ երկարացացիութեան կառոյցը գործող է: Պարզորոշ սահմանած է, որ իրաքանչիր պետութիւն կարող է իր քաղաքացին համարել այլ երկրի քաղաքացիներին: Վերապահում արևած է երկու դէպրում (ա) պետութիւնը իր երկարացացուն չի կարող դիւանագիտական օգնութիւն ցոյց տալ այն երկրում, որի քաղաքացին է նա միաժամանակ, թ երկարացացին իր ապրած երկրից բացի, միևն երկրում ազատում է զինուրական պարտականութիւններից:

### - Դոք, որպէս քաղաքացիական իրաւունքի ճանաչած մասնագիտ, ի՞նչ էք առաջարկում:

- Առաջարկում եմ ՀՀ Սահմանադրութեան 14 յօրածը շարադրել հետեւեալ բովանդակութեամ.

«Յօրաւած 14. Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութեան ձեռք բերման եւ դադարեցման կարգը սահմանում է օրէնքով:

Ազգութեամբ հայերը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն են ձեռք բերում պարզեցւած կարգով:

Հայաստանի Հանրապետութեան օրէնքին կամ միջազգային պայմանագրին համապատասխան, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացին կարող է ունենալ այլ պետութեան քաղաքացիութիւն (երկարացացիութիւն):

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացու՝ այլ պետութեան քաղաքացիութիւն ունենալու հանգամանքը չի նստացնում նրա իրաւունքներն ու ազատութիւնները եւ նրան չի ազատում Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնից բխող պարտականութիւններից, եթէ Սահմանադրութեամբ, օրէնքով կամ Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագրով այլ բան սահմանած չէ»:

Երկարացացիութեան ընդունմամբ հաւատարիմ կը մնանք նաև նոր ազգային զարօնքն արձանագրող Հա-

յաստանի անկախութեան հոչակագրին, որի 2-րդ կէտի համաձայն «Արտերկրի հայութիւնը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութեան իրաւունք ունի»:

Ինչ վերաբերում է երկարացացու իրաւունքների եւ ազատութիւնների սահմանափակումներին, դրանք համապատասխանաբար կը նախատեսեն ինչպէս Սահմանադրութեան նորմերով, այնպէս էլ ՀՀ քաղաքացիութեան մասին օրէնքով ու ՀՀ միջազգային պայմանագրով: ■

ՀՀ օրաբերք  
Հարցազրոյց՝  
Էղարդ Շահիրեանի

Շշուկ թէ...

Ժար. Էջ 1-ից

Այդ շշուկային գօտին գոյանալով մայրուղին կը դառնայ միջազգային ճանապարհ, դրա ոչ Ռուսաստանի, ոչ Երանի շահերի հետ չի համընկնում, վստահաբար դրա կազմի Հայաստանի եւ վերոյիշեալ երկրների յարաքերութիւններին:

Եթէ այդ շշուկը իրագործի՝ Թուրքիայի ձեռք բերած շահերը չեն համապատասխանի Հայաստանի ձեռքբարութիւնների հետ: Թուրքիան հայ ժողովրդին ցեղասպանութեան է ներարկել եւ 1.5 միլիոն հայ է սպանել, նոյն քանիով էլ ցեղասպանութիւններից փախած հայերին աշխարհի չորս կողմերում քափառական դարձրել: Այդ շշուկային ծրագրի դիմաց Թուրքիան ինչ ով պիտի Հայաստանին փոխարինի, արդեօք մեր նահատակների արնեգինը 3 միլիարդ դրամ: Անձ Եղեռնից արդէն 85 տարի է անցել եւ այդ տարիներում հայ ժողովրդը ամբողջութեամբ անդադար արդարադատութեան բռնոք է ներկայացրել աշխարհին, որպէսզի այդ ոճրագործութիւնը ճանաչի: Բայց ինչպէս որ մի երկու շաբաթ առաջ տեսանքը քաղաքական եւ տնտեսական շահերի համար ԱՄՆ-ի նախազարդի նամակով Կոնգրեսը հայկական ցեղասպանութեան հարցը օրակարգից դրւու բերեց եւ հաւանական է, որ դա կրկնի նոյենքերին Խտալիայում:

Եթէ այդ շշուկային գօտին ստեղծի՝ դա հաւատարար կազմի Հայ Դատի լուծման գործընթացի վրայ: Թուրքիան ստանալով այդ, երեք Հայաստանին որեւէ մի հասուցում չի ներկայացնի եւ ընդհակառակը դրա կը լինի մի պարզեւարում Թուրքիան իր կատարած ցեղասպանութեան համար:

46 Կիլոմետր լայնութեամբ Զանգեզուրի բնական պատր մի քանկազին ռազմավարական դիրք է Հայաստանի համար եւ դրան չափանի քանի միլիարդներով վաճառել, սա հայ ազգի ճակատագրին կապած մի հարց է, աւելին որեւէ հայրենական հող, որեւէ ժողովրդի համար սրբութիւն է եւ անփոխանցելի: Հաստատ այս շշուկն էլ նախկինի պէս կը մնայ լոկ շշուկ եւ ազգակործան վտանգը կը վերանայ հայ ժողովրդի նորորեայ պատմութեան էջերից: ■

## Հասարակական

ՕԵՅ<sup>2</sup> ¼ ¶<sup>2</sup> ՍԵՅ  
àÖð<sup>2</sup>, ² ¹ ² ¹ օ ² Ү

Իրաւաբան  
Ալբերտ Բենարդի



Մարդկության մշտական խորհեղ է, թէ ինչո՞ւ անպատիժ պիտի մնան իր դեմ գործած ոճիրները, մանաւանդ եքք դրանք կատարում են պետությանների միջոցով:

Արդեօք որեւէ պետություն իրաւունք ունի, թէկուզ իր հողային ամրողութեան սահմաններուն, քաջազնի ապրոյ ժողովուրդի մի մասին՝ ցեղասպանության 19-րդ դարի վերջերին եւ մասնաւորապէս 1915 թականին, եքք Թրքական սպանոյ զոհ դարձան 1.5 միլիոն անմեռ հայեր:

Իսկ անցնող 50 տարիներին մօտաւորապէս 250 զինեալ բախտունների ընթացքին զրիել են աւելի քան 86 միլիոն մարդ, մեծ մասամբ կիններ ու երեխաններ:

Տարբեր ժամանակներում մի խումբ պետությաններ փորձել են զանազան ոճրադատ ատեաններով կամ միջազգային դաշնագրերով պատժել այդպիսի ոճրանքերին, զարգացնել նման արարքներ, սակայն դրանք համայն մարդկութեան համար երաշխիք չեն ըստեղծել, քանի որ...

ա) Ոճրադատ ատեաններ կեանքի են կոչել պատերազմուն յաղթական հանդիսացող պետությանների միջոցով՝ դատավարութեան յանձնելու պարուած պետությանների դեկավարներին, ինչպէս օրինակ 1919 թականին, առաջին համաշխարհային պատերազմի ասարայց յետոյ, Վերսայի դաշնագրով՝ Գերմանիոյ կայսեր և այլ յանցագործներին դատելու համար, 1920 թականին Սերի դաշնագրով՝ Տաճիկ դեկավարներին, հայ ժողովորդի ցեղասպանութեան յանցանքով, 1937 թականին Նախկին Ազգերի լիգայի նախանձենութեամբ Քրուար ոճրագործներին Խաղովակայի Ալբասենդր թագաւորին ահարեկելու մեղադրանքով:

Ապա, երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ, յաղթական պետությանները կազմակերպեցին Նորեներգի և Թոքիոյի դատաստանները՝ պատժարկելով պարուած Գերմանիայի և Ֆրանսիայի դեկավարներին կատարած ոճրեների համար:

Աւելի վերջերս 1993 և 1994 թթ. Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Ալյանսութեան խորհուրդը կեանքի կոչեց ոճրադատ ատեաններ՝ դատելու համար Իւգուստիայի և Ռուսանքայի դեկավարներին՝ կատարած ցեղասպանությանների յանցանքով:

թ Միջազգային դաշնագրերից հենագյնը պիտի յիշատակել 1864 թականին կնքաւ Ժնևի դաշնագրը՝ պատերազմի վիրաւուրների հանդէա ցուցարեւող վերաբերմունքի մասին, որը մեծապէս զարգացրեց մարդկային իրաւունք օրենդրությանը, մեր այսօրույ ըմբռնումով:

Այդ ուղղութեամբ եւ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան նախանձենութեամբ կնքեցին հետեւեալ միջազգային դաշնագրերը.-

1. Մարդկային իրաւունք Տիեզերական Յայտարարութիւնը, 1948 թականին:

2. Ցեղասպանութեան Արգիլման եւ Պատժարկման դաշնագրը, 1948 թականին:

3. Տնտեսական, հասարակական եւ մշակութային իրաւունքների դաշնագրը, 1976 թականին:

4. Տրոպայի Մարդկային իրաւունք դաշնագրը, 1950 թականին, Ամերիկայինը 1969 թականին եւ Աֆրիկայինը 1981 թականին:

5. Խոշոտաճման եւ այլ բռնությանների, անմարդկային կամ վարկարեկիչ վերաբերությունի դեմ եւ պատիժ տնօրինող դաշնագրը, 1985 թականին:

6. Մանկանց իրաւունքների հովանաւորութեան վերաբերեալ դաշնագրը, 1989 թականին:

Այդուհանդեմ, մինչեւ այսօր, բռվանդակ աշխարհում անքի անգամներ խախտուել են այդ դաշնագրերը եւ անպատիժ են մնացել դրանց հեղինակները:

Հետեւարաք, վերջին տարիների ընթացքին, անյետած գետի պահանջ համարեց կնանքի կոչել մի միջազգային ոճրադատ ատեան, որն ամենուր կարողանայ հետապնդի մարդկային իրաւունք խախտումը եւ ենթակայ չենի մեծ պետությանների շահերին ու թելադրանքներին:

Ի վերջոյ, միջազգային երկարատես հանդիպուներից, համագումարներից եւ նախապատրաստական աշխատանքներից յետոյ՝ 1998 թականի յունիս-յուլիս ամսներին 160 պետությանների մասնակցութեամբ Հռոմու կնքեց «Միջազգային Ոճրադատ Ատեան»-ի հիմնադրման դաշինքը: Ատեանի գործունեութեան կանոնագիր վակերացւեց 1998 թականի յուլիսի 17-ին, 120 թեր եւ 7 դեմ բւնդով: Զենուան մնացին 21 երկրներ, բացակայ էին 12 պետությանների ներկայացուցիչները:

Չինաստանը, Խորայէլ եւ ԱՍՆ-ը դեմ թւարկոյ երկրների շարքում էին գտնում:

128 յօւլիսներից բաղկացած կանոնագրում հանգանորդն մեկնարանուել են մարդկութեան դեմ կատարուող ոճրեների բնոյրը, դատարանի իրաւունք սահմանները, անկախ դատախազի լիազօրությանները, միջազգային համագործակցությունը, քննարկումն այն ոճրեների, որոնք չեն հետապնդել պատկան երկրու անկախ այն հանգանանքից, թէ տեսալ երկրը համաձայն լինի թէ ոչ, դաշնագրի մաս է կազմել թէ ոչ, վնասից հատուցում որոշել վերապրոյ անհատներին կամ զրերի պարագաներին, վճարահանել Միացեալ Ազգերի Կազմակերպութեան քարտուղարի միջոցով ուղարկած գանգատները մարդկային իրաւունք խախտման վերաբերեալ եւ այլն:

Միջազգային Ոճրադատ Ատեանը պաշտօնապէս գործի պիտի անցնի 2001 թականի յուլիս ամսին:

Կանոնագրի համաձայն յիշեալ ատեանը իրաւունք ըննարկելու անցեալում կատարուած ոճրեներն ու մարդկային իրաւունք խախտումները:

Այսու, որ հնարաւոր չէ Հայ Դատը այդ ատեանում հասուցել:



## Հասարակական

«Լոյս» երկարաբարերի յարզաժամ խմբագրութիւն.

Ներփակ Զնզ եմ ուղարկում 1999թ. մարտի 10-ի «Պատգամատրական ժողովում ընթերցած գորութիւն», որը դժբախտարար միայն հենց այդ ժողովի սեփականութիւնը դարձաւ. չգիտեմ անգամ արխիմետում պահիե՞ց թէ ոչ, քանի որ երբէք չարժարծեաւ:

Խնդրում եմ Ձեր թերթի յարաջիկայ համարներում տպագրել այն, (նախընտրելի է 12-րդ «Պատգամատրական ժողովի ընտրութիւններից յնտոյ») գուցէ 12-րդ Պ. ժողովը յարմար նկատի նշանած առաջարկներից առնազը մէկ կամ երկուսով զբաղելու եւ գործադրելու՝ իրաւասութիւնը յդելու նորդնուիր Թեմական խորհրդին:

Յարգանօք՝  
Կիսուշ Արզուեան  
Պատգամատր 11-րդ Պ. ժողովի  
12 հոկտ. 2000 թ.

Գերաշնորհ Սրբազն Հայր,  
Պատգամատրական Ժողովի Յարզաժամ Դիւան,  
Յարգելի Պատգամատրներ եւ  
Թեմական Խորհրդի Յարգելի Կազմ

Արդէն աւելի քան 10 տարի է, որ զբաւել ենք Թեմիս բարձրագոյն ժողովի, իմա՝ Պատգամատրական ժողովի արուները, այն հաւատրով, որ ժողովրդի ներկայացուցիչներն ենք և պիտի ծառայութիւն մատուցենք ժողովրդին: Ինչ վերաբերում է անձիս, անցած տարիների ընթացքին, ի բաց առեալ առաջին նատաշրջանում, բանաձեւային յանձնախնդիր անդամ ընտրելով, հենց այդ տեղից ինձ համար փաստեց, որ երբէք անկեղծ չենք նոյնիսկ մեր բանաձեւերի ընկալման մէջ ու մեր արտայայտութիւններում, եւ որեւէ քննադատութիւն չենք ընդունում կամ հանդրութում. Թեմակալ Առաջնորդից մինչեւ Թեմական Խորհրդը կամ յանձնախնդերի որեւէ անդամ. այդուհետ որոշեցի ժողովների ընթացքին չարտայայտել, թէկուզ՝ մէկ բար կամ կարծիք յայտնել. սակայն ուշի ուշով հետեւել եմ ժողովների ընթացքը, լսել եւ ինքու են դատել կամ բացական կամ բացասական երեսութիւնները: Պիտի ասեմ, որ ոչ թէ չեմ կարողացել խօսել այլ այդպիսով իսլու բոլորն եմ արտայայտել:

Գիտեմ, որ քաղաքականութիւնը անկեղծութիւն չի պահանջում եւ եթէ կարիքը պահանջում է մինչեւ անգամ պէտք է ստել սակայն այդ գուցէ պէտք է արտաքին յարաբերութիւնների մէջ կիրառել, բայց դժբախտարար մեր որդեգրած քաղաքականութիւնը, մեր եւ մեր ազգային դրամքների համար էլ է գործադրութում. Բայտ է որ մենք անկեղծ չենք հենց մեր հանդէպ, բայց իրականութիւն է, որ քաղաքականութիւնը ունի նաև բարոյականութիւն իր ժողովրդի համբաւ:

Մենք երեխաներ չենք, որ ժողովի ժամը խելով, ժամը մեզ բացատրի հեղինակութիւններին յարգելն ու ազգային աշխատանքներում զիարերութիւններ կատարելու հնասար. արդէն այլ գիտակցելով է, որ ազգային կեանքում մեր ներդրումն ենք կատարում:

- Այն, պէտք է հեղինակութիւնները յարգել, սակայն երբեմն էլ պէտք է սրբածորէն հեղինակութիւնների սխալները մատնանշել: Դա է պահանջում ժողովրդականութիւնը եւ դա է

պահանջում առողջ հասարակութիւն ու-նենալու ցանկութիւնն ու հետանկարը:

Դժբախտարար Պատգամատրական ժողովը վերածել է լոկ ճեւականութեան եւ մենք էլ դարձել ենք խամաճիկներ. գուն վերջին շրջանում այս զգացնունքն է տիրում մեզանից շատերի մէջ:

Թատերախասները մէկը միւս հետեւից կրկնում են, առաջարկներն ու որոշումները բայց է սառոյցի վրայ են գրում և գուն ինչպատճեան են Պատգամատրական ժողովից բխած առաջարկները կամ հանուած որոշումները, անտեսում են և մոռացութեան մատնում: Պատգամատրական ժողովը դարձել է լոկ իրար չհանդուրժելու մի վայր. պատգամատրների տրանսպանօրէն աստած խօսքերը, չի ընկալում որպէս ժողովրդի մի ներկայացուցիչ կողմից արտասանած մտահոգութիւն, այլ անհատը է քարկուտում, եւ ժամեր երկխօսութիւններ կատարելով մեղքում ենք բուն խնդիրներով զբաղելու և լուծումներ առաջարկելու բանկագին բայցները: Հետեւերար մեր բոլոր ժողովները դարձել են բատերաբներ, որը ունի հեղինակ, բնմադրիչ եւ դերակատարներ, որը գրում է, բնմադրում եւ մենք որպէս դերասաններ պէտք է գործադրութենք այս: Ունանք գուցէ սիրում են բնմ բարձրանալ ու քելադրուած դերեր ստանձնել եւ իրական կեանքում դերասաններ լինել, բայց դա մեր համայնքի ցաւերը չի բուժում:

Յանձնախնդերը իրենց գործեակերպի համար պատասխանութեան և հաշվառման հեղինակութիւնների և թեմական Խորհրդուն՝ Պատգամատրական ժողովին: Խորաբանչիր պատգամատր պէտք է ազատ արտայայտելու, ազատորեն ընտրելու և ընտրելու իրաւանքն ունենալ:

Եկել մի անգամ վերանայենք անցեալ տարիների մեր կատարած ազգային աշխատանքները եւ ինքներս դատենք՝ թէ արդեօ՞ք արդարացրել ենք մեր համայնքի պահանջները: Ին պատասխանը՝ բացասական է. փաստը մեր զարդուի անտարերութիւնը, օրէ-օր բայցին նազումը եւ մշակութապն անկլումն է, ուստի պիտի հաստատենք, որ ոչ թէ տեղը այլ յետքայլ ենք արձանագրել:

Պատգամատրական ժողովում անգամներ խօսել է ազգային կալանակների լաւագոյնս օգտագործման կամ վաճառքի մասին. անգամներ խօսել է այն գոյերի մասին, որոնք պահ է արևած Ազգային հշանանութեան մօտ: Օրինակ ծորակաշնուրեան եւ այլ խնդիրների կապակցութեամբ, սակայն երբէք կտրուկ հաշվառման չի կատարել. այլ խնդիրները քաշըշել ու այնքան են երկարացնել, որպէսզի մոռացի բուն հարցը:

\* Խօսքը վերաբերում է նախկին Թեմակալ Առաջնորդին, այս գրութիւնը նրա վախճաննան բարձրացած առաջ է ընթացւել:

## Հասարակական

Թեհրանի Հայոց Թեմի Կանոնագրութիւնը դժբախ-  
տաբար ի՞նչ-ի՞նչ պատճառներով, շատ էլ հստակ չէ, սա-  
կայն եթե ընդունենք այդ կառոյցը, այնտեղ նշան բոլոր  
Սարմիններն ու յանձնախմբերը, կեանքի են կոչած եւ  
իրենց ուժերի սահմաններում գործում են, բայց թէ ինչո՞ւ  
Մշակութային Սարմինը, որ մեր համայնքի կարենոր կրո-  
ւանը պիտի հանդիսանար, երբեք կեանքի չվոչւնց եւ միշտ  
անտեսեց: Մինչդեռ այստեղ անզամներ խօսեց Ֆուտրո-  
լին յատկացւելիք դրամների եւ Ֆուտրոլը պահելու մա-  
սին: Մեծ զումարներ յատկացւեց եւ պաշտպանեց այդ  
յատկացումները. իսկ եթե մեկը հակառակ արտայայտ-  
ւեց՝ քարկոնց կամ խորվութեան պատճառ դարձաւ,  
սակայն մեր Թեմական Խորհուրդները երբեք չմտածեցին  
մեր համայնքի մշակութային կեանքի բարեկաման  
համար եւ չուցեցին սատար հանդիսանալ դրան:

Նախկին Թեմական Խորհուրդը, մեկ անգամ հպան-  
ցիկ կերպով անդրադառն է փորձեց Սարմին կեանքի  
կոչերուն, սակայն միևն հարցերի ննան, այդ էլ անկատար  
մնաց: Գոյց ասենք-մեր մշակութային Սիորինները ար-  
դյէն այդ բնագաւառում աշխատանք են տանում, բայց բո-  
լորը միաբերան կը հաստատեն, որ բաւարար չէ եւ ակըն-  
կարած արդիւնքը չունի այս: Իսկ որպակեալ մակարդակի  
հասցեւու համար, պէտք է Ազգային Իշխանութիւնը ներ-  
դրում կատարէ, նկատի ունենալով, որ հայապահպան-  
ման առաջին եւ կարեւոր ազդակներից է՝ Հայ Մշակույթը:

Մեր զաղութիւ ուժեղացնան համար, առաջարկում են՝  
նախ ազգային մարմիններում արումներ գրաւած հրա-  
քանչիր անհատ, իր անձնական շահերը (բարոյական թէ  
նիրական) մասսամբ նոռանալով, աւելի անանձնական  
մօտեցում ունենայ խնդիրներին եւ ընդիանուրի շահերը  
վեր դասի բոլորից: Ազգային Սարմիններում աշխատող  
բոլոր ազգայինները, պիտի ի վերջոյ ինանան, որ հաշ-  
ւետու են աւելի բարձր Սարմինի, որն է՝ Պատգամատ-  
րական ժողովը:

Հակառակ անգամներ եկած առաջարկների, մեր  
քահանայից դասը (բացառութիւններն յարգելի են) իր  
կրչումի վրայ չի դժբախտաբար: Գտնելով մի երկրում,  
որտեղ կրօնն է գերիշխում, մենք էլ կարող ենք մեր Առա-  
քելական Եկեղեցու կրօնական եւ ազգային դաստիարա-  
կութիւնը, մեր քահանաների միջոցով վիխանցել ժողո-  
վորին եւ երիտասարդութեան, թէ Եկեղեցիներում եւ թէ  
բնակարաններում. սակայն այդ չ' կատարում իր միշտ  
առումով:

Ուտք է աշխատանք տանել, իրենց առաքելութեանը  
գիտակից, ուսեալ ու երիտասարդ քահանաների դաստի-  
արակելու համար, որպեսզի մեր ժողովուրդը յարգանք  
տածի թէ Եկեղեցուն եւ թէ հոգեւոր հայրերին:

Հայ աշակերտութեանը հայեց դաստիարակու-  
թիւն տալու համար, հայազդս ուսուցիչներ վարձելու եւ  
նրանց բարձր վճարում կատարել:

Հայկական դպրոցներում բոլոր առարկաների  
դասաւանդման համար վարձել ամենալաւ ուսուցիչնե-  
րին՝ վճարելով բարձր ռոճիկ:

Հայկական դպրոցները արդիականացնել եւ քայ-  
լել ժամանակի հետ.

Ազգապահպան շէնքերից մեկը Մշակութային  
Կենտրոն դարձնել եւ յատկացնել ու տրամադրել.

1- Արտապասարանային դասընթացներին, օգտել  
յառաջադիմ երկրների կրատաստիարակական ծրագրերից.

2- Համակարգչի ուսուցման ընթացքում, օգտելով հմուտ  
ուսուցիչներից՝ ուսուցում տալ մեր պատամիներին եւ  
երիտասարդներին:

Նրանցից քիչ դրամ գանձել, սակայն ուսուցիչներին բարձր  
վճարում կատարել:

3- Ունենալ մեկ արհեստավարժ երգչախումբ եւ բա-  
տերախումբ, որն ողբակի հովանաւորի Ազգային Իշ-  
խանութեան կողմից: Վճարել թէ դեկավարներին եւ թէ խմբի  
անդամներին, որոնց վորձերը կը կատարի վերո-յիշեալ  
Մշակութային Կենտրոնում:

Բոլոր ուսուցիչներն ու դաստիարակները ընտրեալ կմննենու  
նրանց ուսման մակարդակի եւ կարողականութեան վրայ, ոչ թէ  
ըստ կամ:

Սիրիքններում աշխատանք տանել միայն մանկա-  
պատամենան խմբերի հետ:

4- Մշակույթի Կենտրոնում, ունենալ հասպատենի,  
համայնքին արհեստավագւտների հանդիսառների համար եւ  
ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ մեր զաղութիւ բոլոր  
արհեստավարժ արհեստագւտները ընդառաջեն եւ իրենց  
ներկայութեամբ՝ ստեղծել լորրիմզ:

5- Թեմական Խորհուրդը, եթե ունի զաղութիւ մար-  
դահաշիւը, որը ունի, պէտք է տեղեակ լինի իրարանչիր ընտամիքի եւ կամուսից, քանի կամ ընտամիքներ, որոնց հանար  
իրավունք ուժաւ է տան վարձ վճարելը, ուստի եւ նրանց  
յատկացնել պարագաները ազգապատկան կալածներից յար-կարածին,  
ստանուլ չնշին վարձ:

Եթե իրապէս մտահոգ ենք մեր զաղութով, եւ եթե իրա-  
պէս ցանկանում ենք հզօր սկիզբ ունենալ, որը սատար  
պիտի հանդիսանայ Հայաստանին, պարտաւոր ենք լայ-  
նախոհուն մօտենալ խնդիրներին եւ նիւթական ներքո-  
րում կատարել, (որը դժբախտաբար չի գործադրուել մին-  
չեւ իինա) որպէսզի մեր աշակերտները, արհեստագւտ-  
ները եւ ինչու չէ, նաև մարդկները առաջնահերթութիւնը  
չտան պետական դպրոցներին ու կենտրոններին:

Բոլոր առաջարկներս գոյց թայ լոգունգային: Սա-  
կայն իրականութիւն է, որ մեր զաղութիւ ոչ դրամի պակաս  
ունի եւ ոչ էլ մարդումիք, այլ ունի միշտ ծրագրաւորման  
գործադրաման պակաս:

Վերածու ենք մի քինախնդիր, այլամերժ ու կաղա-  
պարած մտածելակերպով մարմինների, որից տուժում է  
մեր զաղութիւ, հետեւաբար նաև մենք:

Յարգանօք՝  
Կիտուշ Արզուեան  
Պատգամատոր 11-րդ Պատգամաւորական Ժողովի  
Թեհրան, 10 Փետրուարի, 1999 թիւ

Պատճեն: Ազգային Ժողովի յարգարժան դիւան

Պատգամատորական Ժողովի յարգելի դիւան եւ  
պատգամատորներ:

Թեհրանի հայոց թեմի յարգելի Թեմական Խորհուրդ

Այլք օրաբերքի յարգելի խմբագրութիւն. ■

## Յայտարարութիւն

Ընթերցողների ուշադրութեան ենք յանձնում,  
պատգամ կամ որեւէ հարցի կապաւ կարծիք ունե-  
նալու դէպքում հաւաքել 6401471 հեռախոսա-  
համարը եւ թողնել Ձեր պատգամը:

Մշակոյթ

# ԳԱԼԵՐԱԿԱԾ աշխարհի պատմություն

## Մեպտեմբերի 30-ին Ղենրիկ Մալեանը 75 տարեկան դարձաւ

«Թում է, ես ինձ յիշում եմ իմ ծննդեան օրից:

Երբ կլոցած աջերիս միջից մեր գորչառուն առաստաղի Ֆոնի վրայ տեսայ հասանարաք ին հայրիկի, մայրիկի, քրոջ և մօրաքրոջ հետաքրքրուած հայեացըները, որոնք յի էին զարմանալի ու անկրկնելի եակ ընկալելու տեսչանքով:

Թում է նաև, որ ես յիշում եմ իմ շրջապատի բոլոր առաջին պատկերները օրօրոցի թիվին կողի ուղակցութեամբ...

Եւ արդէն ոչ թէ բում է, այլ հաստատ յիշում են այն պահը, երբ երկարատե՛ հորիզոնական իմ դիրքից յետոյ առաջին անգամ ուղղահայեաց կանգնեցի աշխարհի վրայ եւ ամէն ինչ սկսեցի տեսնել նորից, բայց արդէն բոլոր-վիճ այլ դիտակետից...

Յետոյ խաղալիքների գոյնօգոյն մի աշխարհ... Յետոյ մեր բակի կանաչն ու կանաչի տակին ամօրից կարմիր կտրած բալերի օրօրուն խաղը...

Ապա «երկուերի» ու «հինգերի» անհերթ մի մրցավազ դարպնում... Ես ապա կենաքի մի դաժան փորձութիւն... 1941 թի, պատերազմ...

Եւ այս է՝ հենց այդ տարիներին, երբ նոր-նոր աւարտելու էինք դպրոցը, եւ իմ սերմանոք պատրաստում էր կապոյտ մի քոիչքի...

Եւ յետոյ գրծարանային դաժան մի ռեժիմ... Պատանեկան մի խուզ քողոք՝ Կոկորդներիս մեջ, իսկ ականջներում և եփուածի արուսանու շաստ...

Եւ իշրակէ, նաեւ անտուսափելիք Տէրեանը եւ մի քանի «առաջին սերեր» իհնաց, տասը, տասնիհնաց եւ մանաւանդ տասնիօթ տրամիսանոց:

Ենոյ պատերազմի աւարտը՝ մայիսեան մի խաղաղ պահօն:

Յետք Թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետ

Յետք լայնինք ու լասուն մի բարով

Эსთոյ ფასისტები ვამჟალი არ გმილო...  
Эსთოյ რასტრალან ათავის ქანაერობებან պარ-  
ოკრას კუთხონის ხუთ

Ապա «ՀայՖիլմ» կինոառողջիա, ասիատենտ, ուժի-սոր, ամուսին, բնադրիչ, հայր, տիտղոսներ, ուղևորութիւններ, քատրոն-ասուղիա, պապիկ, դիտողների հնչ-որ քանակ, ֆիլմերի, ներկայացումների հնչ-որ որակ...

Սի քանի բարեկամ, մի քանի տասնեակ հակառակոր...  
Սի քանի բարեկամ, մի քանի տասնեակ հակառակոր...

Եւ ահա կարծես ամեն ինչ...  
...

Ես աշխարհում համարեա ոչինչ զգիտեմ... Ես զիտեմ մարրութիւն...»:

Սա իր գիրն է իր մասին, արևստի մարդու ինքնակեն-սազրութիւնը, որը թիւր ու տեղավայրեր չունենալով, հանցիչ ու պահուածին է:

Քիչ էր խօսում, հարցագրոյցների եւ ասուխների չէր մասնակցում։ Գոյց ժամանակով էր պայմանատրուած։ Բայց համոզած են, որ այսօրուայ համընդիքանուր ասուխ-սացակը էլ ինքն իրեն դուրս կը պահեր։ Չէր սիրում խօսել։ Իրենը գործ անելով էր՝ Ֆիլմ ստեղծեալ:

Սի անզամ բախս ունեցայ ներկայ գտնել «Մենք ենք,  
մեր սարերը» Ֆիլմի դրազմներից մէկի նկարահանմանը։  
Փորձեցի խօսենել, իրենից խօս փախցնել, իր արածի  
իր բացատրութիւնն ստանալ։ Չխօսեց։ Շատ կիրք, սի-  
րալիի հրաժարութեց։ Չխօսեց։ Գործ էր անում։ Ազատ Ծե-  
րենցը պիտի ոչխար լողացներ։ Լողացնում էր՝ որքան  
կարող էր։ Ծերենցին բուռ էր, թէ լաւ է ստացնում։ Հենրիկ  
Մալեանին դա չէր գոհացնում։ Ոչխար լողացնելու ինչ է,  
ինչպէս էլ լողացնեմ։ Կը լիներ։ Շէ։ Հենրիկ Մալեանն  
առաւելն էր ուզում։ Ու քրտնմխած Ծերենցը նորից ու  
նորից լողացնում էր։ Մեր տեսածից աւելին էր տեսնում  
Հենրիկ Մալեանը։ Նա էկրանին ցուցաբերելիքն էր տես-  
նում։ Նա տեսնում էր կինո՛ւ հրաշքը։

Ոչ ոք զգողի չէր նրա պահանջկուտրինից, ոչ ոք չէր բողոքում: Իրենից՝ Հենրիկ Մալեանից էր զալիս այս համբերատարութիւնը, հաւատը, սերը մարդու, ոչխարի, ջրի, քարի նկատմամբ: Այս ամենը պարզորոշ երևում է նրա Ֆիլմերում՝ «Նազախնմիթ տղաներ»-ում, «Սենք Ենք, մեր սարեր»-ում, «Եռանկիւնի»-ում, «Հայրիկ»-ում, «Կտոր մը երկինք»-ում, «Նահապետ»-ում... Նրա Ֆիլմերում չար մարդիկ չեն: Եթէ անզամ կան, չեն լիշտում...

1988-ին մենք բոլորս Ազատության հրապարակում էինք: Բոլորս: Նա է մեզ եւս էր: Հենրիկ Սալեանը էր:

«Մենք ներ, մեր սարերը» Հենրիկ Սալեանին սկսում է աշխարհիկ զողոցներով, պայրիններով, ջիշերով, կրքերով... Ու յետոյ այս ամենը մաքրած է, և կրանքն պարզ-լուս է բնութան խաղաղ մի տեսարան, տիեզերական խաղաղութեամբ ապրող մի տարածք, որ ամեն ինչ որ նախնական իմաստն է ստանում: Այդ տարածքն ապա-կանած չէ: Այսպէս պէտք է լիներ միշտ, այսպէս պէտք է լիներ բոյորի համար, որպէսզի կորերը ներ չակրակէին, որպէսզի ամէն ինչ մարդոր մնար: Սա Հենրիկ Սալեանի արքմանի երազն է, մեր քարուն երազանքը... Այսպէս այս-տի լիներ... ■

Սերգեյ Գալոյեան

# Թոյլ կէտը Մարդու բնութիւնը Ո.Բէնի արձակում

Արգար Ավիհնեաս

Ուորէն Յովհաննիսեանը (գրական անունը Ռ. Բէն) երկար տարիների վաստակ ունի մեր արձակում: Ամենից խստաճաշ քննադատու անզամ Ռ. Բէնի գրականութիւնը կը դասի մեր արձակի առաջնակարգ երևոյթների շարքում: Սիս նոր գրական ոճ մեր արձակ ժանրում, որ անշուշտ, արդինաւեա կը լինի նաև 21-րդ դարի մեր գրականութեան ասպարեզում:

Սիս հայկական պատմածքի վարպետութեան նոր որակ, որ լիարժեքուն յարաբերելի է ժամանակակից երպարական արձակի լատագոյն նմուշների հետ: Ես, վերջապես, ահա մի հեղինակ, որ հաւասարը չունի ինքն իր հանդէպ ցուցարերած խստապահանջորդեան հարցում՝ իր բազմարին գրածքներից իրապարակի վրայ է ընդամենը մէկ, բայց ընտիր հասոր՝ «Առեր... կերեք եւ այլ գրածքներ»:

Արձակի այս ոճով կը հրապուրի մեր այն ընթերցողը, որը փրկում է մնորել աշխարհի եւ նարդու նախին: Կենաքն ի՞նչ է, եւ ո՞վ է մարդու: Ի՞նչ բնազմերի վրայ է խարսխած նարդու բնութիւնը: Ժողովածով համանուն պատմածքում, խոսափերով ուղղակի բնութագրումներից, որ բոյ գրականութեան առաջին յատկանին է, գրողը բացում է խորհրդանշների մի աշխարհ, որն առաջնորդում է մեզ դէահ մեր վնարած հարցի պատասխանը:

Գրողն ասաս է՝ կենաքն միշտ խոցում է խոցեին, բուլանում է բոյը: Ես քանի որ բնութեան մէջ ոչ մի արարած չի ապրում մեկուսի կենաքնով, այլ միշտ ճգուտում է որեւէ յարաբերութեան, ահա նարդու բնութիւնն էլ պիտի վնարենք մարդկանց յարաբերութեան մէջ: Ով է մարդու այն յարաբերութեան մէջ, որ նա հաստատում է այլ մարդկանց հետ: Ես որչափով է տարբերում մարդկային յարաբերութիւնը բնական այլ յարաբերումներից:

Սննք պատրա՞ստ ենք այս գրոյցին: Ուրեմն մի կողմ բողնենք նախապաշարումները: Քանի պատմածքն արդէն սկսել է: Ես պատմածքի հերոսը պատմում է մի տեսակ նանք ձկների նախին, որնք յարձակում են միայն արինուս զոհի վրայ եւ յօշուում վայրկեանապէս: Ֆեռոյ տալիս է եւ բացատրութիւնը նարդկութեան նակատագրի հանդէս, իր մոտականութիւնը, իր ցարութիւնը, իր սերը: Ամեն պատմածք հոգիբանակն զաղունիք ունի, որն ընթերցողը պէտք է պարզի հեղինակի հետ միախին: Միայն հեղինակը չէ, որ որոշում է ասելիքը կեանքի առնենուածը վնարում են նրանք երկու տասնամբ:

Պատմածքի բովանդակային յենքը արտիստի պատմիւնն է: Նա իրեն նախապատրաստել էր մեծ կոյոյի համար, եւ երբ հանդէս եկաւ հանդիսաւուի առջեւ, եւ երբ իր ելոյքը աւարտեց որուրընդուած ծափերի ներքոյ, եւ երբ սրահի լոյսեցին՝ բոլորը շտապեցին նրա մօս՝ իրենց սկըն արտայալսելու: Եւ երբ նրանք դրւու եկան երշանկացած դէմքերով, արտիստի զարդարենեակում մնացել էր միայն մի քարմ կմախը՝ կերել էին մարմնն ու խմել էին արինը, լիզել էին ուսկորները, իսկ կմախքը դեռ յատում էր...

Այս տեսարանը՝ խօսում եւ տպաւորիչ՝ մի պատկեր, բացապարզում է հեղինակի հայեցակետը: Սարդկանց կեանքում գործում են նոյն օրենքները, ինչ բնութեան մէջ: Կարեւոր բոյ կէտան է ամեն արարած դիմացին մէջ եւնց դա էլ փնտրում է: Փնտրում են ձկները, վնարում են մրջինները, փնտրում են մարդիկի: Եւ պարզում է ամեն մի արարած ունի իր բոյ կէտը: Ունանք բարցնում են այն ժախտով, ունանք՝ զարդանակներով, բայց ամենը ունեն իր եւնց բոյ կէտը, եւ բոլորի վախճանը յայտնի է:

Սակայն այս մեկնարդինը որոշապէտ թերի կը լինէր, եթէ անտեսէնք մէկ պատկեր, որին հիմա պիտի անդրադանանք: Նրանով չէ, որ աւարտում է պատմածքը, բայց այն իրապէս գրածքի հանգուցալումն է: Ինչպէս ենք բացայալուն թիստափ վարը, որ բոյ տանց յօժարակամ իրեն խաչ հանել, տարածեց ձեռքերն ու ասաց՝ «Առեք, կերեք, սա է մարմնն իմ...»:

Այս դրազը պատումի մէկ մասն է, այսինքն՝ պատմածքի բաղադրիչ տարրը: Դարեր շարունակ ապրել է մարդն այս երկիրի վրայ, ինչպէս ձկներն ու մրջինները, ապրել նոյն օրենքով ու փնտրել է միջոց՝ այլ արարածների եւ նարդկանց ոչնացնելու համար: Եւ ահա յայտնում է ինքնակամ զնիքը՝ առեքը: Ետքու արարը եւ աստիածային է, եւ միժամանակ մարդկային: Չանզի այլ արարը մարդու համար է եւ մարդկային: Դրանով նա փրկեց մարդուն՝ տարլով նրան կեանքի նոր հնարաւորութիւնի:

Ուորէն Յովհաննիսեանի պատմածքում հեղինակի դիրքորոշումն արտարտուս բացակայում է: Հեղինակը բարոյախոս չէ, ոչ է ուսուցիչ, որը չի փստահում իր սանին եւ ամեն դասողութիւն տախի է բացատրութեանը: Հեղինակն ազատ մարդ է ազատ հոգիներ վնարուու: Ան ինչու մեծ անշուշտ ունի որեւէ գործածք, որտեղ ներկայ չինի հեղինակը: Սննք տեսնում ենք իր տագնար մարդկութեան նակատագրի հանդէս, իր մոտականութիւնը, իր ցարութիւնը, իր սերը: Ամեն պատմածքը հոգիներ ունի, որն ընթերցողը պէտք է պարզի հեղինակի հետ միախին: Միայն հեղինակը չէ, որ որոշում է ասելիքը կեանքի առնենուածը վնարում են նրանք երկու տասնամբ:

Ենք բոլորը կարող է տարակում իւնչո՞ւ են իրեն պատմում այս պատմութիւնները: Նա ուզում է լսել մարդկանց մասին՝ բոլորովին շիմանալով, որ այլ պատմութիւնն է հենց, որ սկսել է: Նայիր շորջոյ, տես արագ ներս ու դրւու անոն մարդկանց, յոգնած մարդկանց, տխուր մարդկանց, արագաշարժ մարդկանց, իսկ այլ պատմածքի հեղինակը չգիտես ինչու կրկին զգուշացնում է կրիան իրեն պահով էր զգում իր կրտս զրահի մէջ եւ չզիտես, որ կան մրջիններ, դեղին, ժրաշամ մրջիններ, զիշակի մրջիններ...

Եիշո՞ւմ ես սրանց առաջ ասած խօսքը՝ կարեւոր բոյ կէտան է, եւ ամեն շնչարու դիմացին մէջ եւնց այլ է փնտրում:

# ԱՅԻ ԲԱՖՖՈՒ ՇԱՌԱՀԻՋԻ ՄԵՍՅՈՐԱԾ

**Շուշիկ Էղգարեամ**

Վիպասան Բաֆֆու ընտանիքից, իր կնոջ Աննայի և երկու տղաներ՝ Արամի և Արշակի դիակներն զմասած, դագաղի մէջ մնում են Լոնդոնի «Քենզլ Գրին» գերեզմանատան մասության ներքում (Քենզլ Բայզ Սէմէքրի), որոնց մասին ինձ յայտնեց Լոնդոնահայ ազգային եկեղեցական գործիչ պարոն Յակոբ Փալամուդեանը, որն իմ մէջ հետաքրքրութիւն ըստով գնալ ու տեսնել:

Ու յիշեցի, որ 1978 թ.-ին, Լոնդոնի «Հայ Երաժշտական Փառասօն» հայութից, ծանօթ եմ Բաֆֆու հարս՝ Տիկին Ալեքսանդրային, որը անզուիլ լինելով հանդերձ, հրաշալի Արևելահայերն է խօսում շնորհի իր Երանում ծննած լինելուն և իր հօր հայասեր լինելուն:

Զանգում եմ Տիկին Բաֆֆուն, (ինքն իրեն այդպէս կոչում) ինքն է վերցնում ընկալուզը՝ քարեւում են, յայտնում եմ ինքնութիւնս, և ցանկութիւն եմ յայտնում իր հետ զնալ այցի այդ պատկառելի ընտանիքի անդամների դագաղներին։ Նա էլ սիրով ընդունում է ու խստանում է կապել այդ գերեզմանատան պատասխանատու մարդկանց հետ ու ժամադրելով՝ զնանք։

Երեք օրից Տիկին Ալեքսանդրան զանգում է ու ճշտում յաջորդ օրուայ համար ճաշից յետոյ ժամի 2-ին մի ժամադրութիւն, որը և որոշում է երկու ժամ առաջ իր մօս գտնենք։

Յաջորդ օրը, քարերախտաքար զանգում է երգիչ ու նկարիչ Խաչիկ Փիլիկեանը ու ցանկութիւն է յայտնում մեզ հետ զայ, ու ինքն էլ լաւագոյն ծանօթ լինելով Տիկին Բաֆֆուն, որին «Բաֆֆի մամա» է կոչում։ նախօրօք էլ նրան խստացել էր, իր ամուսնու Արշակի պատկերը, և այդ առիթով էլ ցանկանում է այդ նկարը ներել տիկին Ալեքսանդրային։ Համաձայնում եմ ու նա զալիս է։

Ու ճանապարհում ենք, Խաչիկը, կին ու ես, իմ քրոջորդի ճարտարագէտն Արմեն Զարգարեանի հետ, իր ինքնաշարժով։

Հեշտութեամբ ենք գտնում Տիկին Բաֆֆու բնակարանը, որը Լոնդոնի կենտրոնական քաղաքան «Քուինզ Վլյ»-ի Փօրչսարք Գարդնեն բողոքի համար 13-ումն է։ Դուն զանգի վրայ զարմանքով դիմում ենք «Բաֆֆի» մակագրութիւնը, որն աւելի համարձակութիւն և հպարտութիւն է ներշնչում ինձ։ Զանգում են, ինք Տիկին Ալեքսանդրան է զայիս, դուք քացում է ծպտալով ու մեզ ներս ընդունում սիրալիր։ Նա մնանակ է իր տնում, ոչ ոքու չունի, ոչ զաւակ, որ այնուենտ պահի Բաֆֆի անունը, բայց ին-



գեպէս առոյգ է ու շատ զնի իր վիճակից ու իր երեք յարկանի կոլիկ բնակարանից։

Տիկին Բաֆֆին, նախ կնոջ է իրաւիրում որ սուրճ պատրաստի, ու անմիջապէս բերում է մի շարք նկարներ, Աննայից, Արշակից ու Արամից, որոնցից քանիշը նիշում է ինձ։

Սուրճ խմելոց յետոյ, սկսում եմ իմ հարցազրոյցը։

**Կարց.- Ինչպէ՞ս է, որ դոք այսքան լաւ հայերէն եք խօսում։**

**Պատասխան.-** Հայրս հայերին ու հայոց լեզուն սիրում եր ու մեզ մանկութիւնից ստիպում եր, որ հայերէն սովորեն։

**Շ.- Ո՞վ էր ձեր հայրը։**

**Պ.-** Հայրս մի անզիհացի բժիշկ էր, որ իր հայրն ու պապը նոյն մասնագիտութիւնն ունեին և նախքան Թեհրանում անզիհական դեսպանատուն բացւելը՝ եղել էնի Թաթիզում, որպէս այնտեղի անզիհական դեսպանատան բժիշկ։

**Շ.- Ո՞ր ք. էին ձեր պապերը հաստատել Իրանում։**

**Պ.-** 1849 -ին։

**Շ.- Ի՞նչ էր ձեր հօր անունը։**

**Պ.-** Բժիշկ Զօրջ Քօրմիկ։

**Շ.- Ե՞րբ են ամուսնացել ձեր ծնողները։**

**Պ.-** 1900 -ին։

**Շ.- Դոք ե՞րբ էք ծնել։**

**Պ.-** 1901 -ին։

**Շ.- Ինչպէ՞ս էք փոխադրել Թեհրան։**

**Պ.-** Ես մօրս կողմից հայ եմ, մայրս եղել է Էնակոլուսան ընտանիքից, որը Վարդան Սամիկոնեանի սերունդից էր։ Բժիշկ կարիք ունենալով 1919 -ին հօրս փոխադրեցին Սուլթանարադ ( այժմ Արար ), որը շատ ցուրտ էր ու մենք չըստ քոյր ու ծնողներս կարաւանով էինք գնում, այնտեղում հայրս հիւանդացաւ ցրտից ու սրտի տագնապ ստացաւ ու հինգ ամսից յետոյ մահացաւ ու ըստ իր ցանկութեան թաղեց որպէս Հայ։ Արարի հայոց հին եկեղեցում, որի քանութեանց յետոյ, մի Ամիրիսանեան անունով հայ, նրա գերեզմանը փոխադրեց է Արարի հայոց գերեզմանատունը։ Հօրս մահից յետոյ մենք վերադարձանք Թեհրան ու մինչև 1923 -ը այնտեղ մնալով՝ փոխադրեցինք Անգլիա։

**Շ.- Ինչպէ՞ս ծանօթացաք Արշակ Բաֆֆիի հետ, և ի՞նչ հանգամանքով։**

**Պ.-** 1925 -ին, ես սովորում էի Լոնդոնի մի գիշերօրիկ դպրոցում, մի օր ինձ սոսն կանչեցին, տեսայ Արշակին, որ եկա էր մօրս այցի, Գուսան վարպետի հետ միասին։ Այնտեղ ինձ ծանօթացրեցին Արշակի հետ։ Այդ օրը սեպտեմբերի մէկն էր ու սեպտեմբերի 3-ին Արշակը եկա մօրս սոսն առաջարկութիւն արա, ու սեպտեմբերի 5-ին նշանեցինք։ Անուսնացանք 1926 -ին։

**Շ.- Ինչպէ՞ս էք եղել, որ Բաֆֆիենց ընտանիքը եկել է Լոնդոն։**

**Պ.-** Մեծ Բաֆֆին մահացել էր 1888 -ին։ 1900 -ից առաջ իր մեծ տղան՝ Արամը, որ Արևելան լեզուների մասնագէտ էր ու լաւ պարսկերէն գիտէր՝ վարձում է Լոն-

## Մշակոյթ

